



ՀՐԱՆԴ ՏԻՆՔ
ԵՐԿՈՒ ՄՕՏ
ԺՈՂՈՎՈՒՐԴ
ԵՐԿՈՒ ՀԵՌՈՒ
ՀԱՐԵԻԱՆ

ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ
ՄԱՏԵՆԱՇԱՐ

1

Յրանդ Տինք Յիմնարկ

Յիմնարկը՝ Յրանդ Տինքի 19 Յունուար 2007-ին «Ակօս»ի խմբագրատան մուտքին սպանուելէ ետք, նման ողբերգութիւնները կանխելու, իր անելի արդար ու ազատ աշխարհի մը ուղղուած երազները, ոճը եւ զգացումները վերապրեցնելու համար հիմնուեցաւ: Յիմնարկի գլխաւոր սկզբունքն է ազգային, կրօնական, մշակութային ու սեռական ամէն տեսակ տարբերութիւնով հանդերց բոլորին համար ժողովրդավարութիւն եւ մարդու իրաւունքներ պահանջել:

Յիմնարկը՝ խօսքի ազատութեան ամենաընդարձակ օգտագործուած, բոլոր տարբերութիւններուն խրախուսուած, ապրուած ու աճած, անցեալի ու ներկայի խնդիրներուն նկատմամբ մերցեցման մեջ խիղճին գերակշիռ եղած Թուրքիոյ եւ աշխարհի հեռանկարով կը գործէ: Իբրեւ Յրանդ Տինք Յիմնարկ, երկխօսութիւնը, խաղաղութիւնը, փոխընկալման մշակոյթի առկայութիւնը կը համարենք «սիրոյն պայքարելու արժանի դատ»:



HRANT DİNK VAKFI
HRANT DINK FOUNDATION
ՀՐԱՆԻ ՏԻՆԷ ՀԻՄՆԵՐԿ

© Հրանդ Տինք Հիմնարկի Հրատարակչություն

Halaskargazi Cad. Sebat Apt.
No 74/1 Osmanbey, Şişli
34371 İstanbul
0212 240 33 65
0212 240 33 94
info@hrantdink.org
www.hrantdink.org

Թղթերնէ Թարգմանող

Բագրատ Եսդուբեան

Խմբագիր

Արլիի Գանթարճեան

Մատենաշարի Ձեւաւորում

Րաուֆ Թեւենէն

Էջադրություն

Արարատ Շէբերեան

Կողքի Լուսանկար

Անի, 2004

Տպագրություն

Mas Matbaacılık San. ve Tic. A.Ş.
Hamidiye Mahallesi Soğuksu Caddesi
No: 3 34408 Kağıthane - İstanbul
Tel: (0212) 294 10 00
Sertifika No: 12055

Ստանապուլ, Հոկտեմբեր 2014

ISBN 978-605-64488-1-2

**ԵՐԿՈՒ ՄՕՏ ԺՈՂՈՎՈՒՐԴ,
ԵՐԿՈՒ ՀԵՌՈՒ ՀԱՐԵԻԱՆ**

ՀՐԱՆԴ ՏԻՆԶ

Յրանդ Տինք

Սեփական կեանքն իր իսկ ստեղծած աշխարհին նուիրած Յրանդ Տինք ծնած է 1954-ին՝ ի Մալաթիա: Փոքր տարիքին՝ իր եղբայրներուն հետ միասին կը յայտնուի Կետիկփաշա թաղի Յայ Աւետարանական եկեղեցւոյ յարակից Ինճիրտիպիի Նախակրթարանին պատկանող Թուզլայի ճամբարը, ուր կը ծանօթանայ ապագայ կնոջ՝ Ռաբէլի հետ: Յետագային անոնք երկար տարիներ միասնաբար կը խնամեն հարիւրաւոր անտէր երախաներ: Պետութիւնը «հայ գործիչներ մարգելու» մեղադրանքով կը գրաւէ ճամբարը: Այսպիսով վերջ կը գտնէ Յրանդ Տինքի «Ատլանտիսեան քաղաքակրթութիւնը»:

Կ'աւարտէ Իսթանպուլի համալսարանի գիտութեան բաժնի անասնագիտութեան բաժինը, այնուհետեւ կը ստանայ Նաեւ փիլիսոփայական կրթութիւն: Յրանդ Տինք յանուն ձախակողմեան քաղաքական պայքարի կը հրաժարի «Կենսափիլիսոփայութեան ամպիոն»ի հետ կապուած երազանքներէն: Ան, իբրեւ հիմնադիր եւ հրատարակութեան տնօրէն, կը հիմնէ Թուրքիոյ առաջին երկլեզու թրքերէն-հայերէն «Ակօս» շաբաթաթերթը: 5 Ապրիլ 1996-ին լոյս կը տեսնէ թերթի առաջին թիւը, որ այսպիսով հիմքը կ'ըլլայ նոր աշխարհի մը: Յրանդ Տինքի ղեկավարած «Ակօս» թերթը Յայ հասարակութեան համայնքային խնդիրները երկրի օրակարգին փոխադրելէ զատ, կարեւոր նիւթեր մշակեց Թուրքիոյ եւ Յայաստանի միջեւ բարիդրացիական յարաբերութիւններու հաստատման, 1915-ի դէպքերը երկու ժողովուրդներու արժանապատուութեան տեսանկիւնէն քննարկելու, ինչպէս Նաեւ կարեւորեց աջակցութիւնը Թուրքիոյ մէջ ժողովրդավարացման գործընթացին: Յրատարակութիւնները 2004-ին կ'արժանանան Նաեւ Սպայակոյտի Նախագահութեան ուշադրութեան, որուն կը յաջորդեն «թրքութիւնը նախատելու» դատերն ու մամուլի մէջ իրեն դէմ յարուցուած արշաւը, որ ան կը դառնայ տեղեկատուական գրոհներու թիրախ: Իսկ 2007-ի 19 Յունուարին կը սպաննուի իր խմբագրատան շէնքին մուտքին:

Ոճիւրի դատավարութիւնը մինչեւ օրս կը շարունակուի որպէս Թուրքիոյ արդարադատութեան որոնում:

**ԵՐԿՈՒ ՄՕՏ ԺՈՂՈՎՈՒՐ,
ԵՐԿՈՒ ՀԵՌՈՒ ՀԱՐԵԻԱՆ**

Կարելի չէր Յրանդը «մտքի մշակ» համարել... Չունէր հատորներով գիրքեր: Արդէն իր մօտ երբեք չեմ նկատած իբրեւ «մտքի մշակ» ներկայանալու ցանկութիւնը: Որովհետեւ ան շատ ակտիւն էր... Յրանդը ըսելիք խօսք ունեցող, մտածող ու մտածումը հրապարակող գործիչ մըն էր: Ան կ'ըսէր, ուղղելը, փոխելը, գոհացնելն ու ամենաշատ ալ այդ գոհունակութեան հաճոյքը վայելելն էր: Այդ իսկ պատճառաւ ծանօթանծանօթ ամէն ոք անոր հաւանական բարեկամն էր: Խղճին ձայնը բաւարար միջոց մըն էր իրեն համար բոլոր անլուծելի խնդիրները լուծելու, խոչընդոտները յաղթահարելու համար: Այդ պատճառաւ ալ միշտ լիայոյս էր, միշտ վստահեցաւ ու միշտ յորդորեց: Յրանդին կանչը հիմնականօրէն խղճին ուղղուած էր, բայց այդ ճանապարհին յառաջանալով՝ ողջմտութեան ու սիրոյ համար եղաւ: Սարդիկ գինք միշտ «մերկ» ընկալեցին: Իր մտերմութեան եւ իրողութեան ձգողականութենէն տարուած՝ փորձեցին ակելի շատ «մարդ» դառնալ:

Մինչ այդ՝ Յրանդը միամիտ վիպապաշտ մը չէր: Կը գիտակցեր իր թեւակոխած աշխարհին շրջապատող իշխանութիւններու հաւասարակշռութեան եւ պատեհապաշտութեան: Հաւանական եղող եւ ապագային հաւանական դառնալիքի միջեւ ճօճուող միտքն ու սիրտը վաղուայ ամենափրատես լուծումները կ'որոնէր: Այդ պատճառաւ ալ առանց վարանումի ընդառաջած էր TESEV-ի Արտաքին Քաղաքականութեան ծրագրի նախագիծերէն մէկուն մասնակցելու հրաւերը: Ծրագրի ղեկավարը՝ Մենսուր Աքլիւն, իրմէ պահանջեց մենագրութիւն մը գրել Թուրքիա-Հայաստան յարաբերութիւնները քննարկող, բայց միանգամայն թուրքերու եւ հայերու փոխընկալում-

Ներն ալ հաշուի մէջ առնող հաւասարակշռեալ մենագրութիւն մը: Ես մօտէն սկանատես եղայ այդ գրի առած ատեն... 3րանդ սկիզբի շրջանին շատ չէր արտայայտուեր իր գրածներուն մասին: Յայտնի էր, որ իր գրիչէն ելած տողերը շատ ալ խանդավառութիւն չէին ներշնչեր: Սակայն հետզհետէ խնդրին վրայ մտածելով, այդ մտածումնիրը զգացումներուն հետ շաղախելով, մերթ դեպի անցեալ, մերթ ալ դեպի ապագայ ծաւալելով գործը սկսած էր իմաստաւորուիլ... Կը զգայի այս փոփոխութիւնը, որովհետեւ հիմա այլ նիւթերու կարգին յաճախ կ'անդրադառնար Նաեւ այս խնդրին եւ խորհուրդներ կը ստանար:

Եկրնր տաս, որ «իմաստաւորում»ը խանդավառութեամբ եկած եւ խանդավառութիւնն ալ զինք հեռացուցած էր իրմէ սկնկալուող «պաղարին» մերձեցումէն: Աւարտելու մօտ էր, երբ օր մը ըսաւ՝ «Պիտի տեսնես, Մէնսուրը պիտի չտպէ այս գործը»: «Ի՞նչ գրեցիր», - հարցուցի: Արդէն կ'ենթադրէի պատասխանը: Գլուխը դանդաղօրէն շարժելով ըսաւ. «Քանի կը գրեմ, գոնէ մտքիս եղածը գրեմ ըսի...»: Իրականութեան մէջ անելին մտադրած էր, որովհետեւ իսկոյն անելուց՝ ըսելով. «Եթէ իրենք չտպեն, ես կը տպեմ»:

Ինչպէս բազմաթիւ անգամներ, այս կանխատեսութիւնն ալ ճիշդ ելաւ: Միջոց մը ետք Մէնսուրը զիս փնտռեց ու տեղեկացուց, թէ 3րանդը գիրքը աւարտած է, բայց «քիչ մը» հեռու է իր սկնկալած անկողմնական մերձեցումէն: Նաեւ խնդրեց, որ ես ալ կարդամ ու կարգ մը փոփոխութիւններու մասին 3րանդը համոզեմ: Սակայն այս գործը այդ հանգրուանին երբ հասաւ, 3րանդ շատ զոհ էր իր գրածէն: Մտքին ու սրտին թելադրածը թուղթին փոխանցած էր: 3աւանաբար իրմէ պահանջուած գործը չիրականացնելն ալ որոշակի կ'անհանգստացներ զինքը... Քանի որ գիրքին նիւթը ընդհանրապէս դուրս մնացած էր մեր նիւթերու օրակարգէն ու կը սպասէր իր ներքին հաշուեյարդարներուն մէջ վերակենդանացման պահը:

Ափսոս որ այդ պահը երբեք չեկաւ... Այս հողերուն հնագոյն ախտերէն մէկը համարուող դաւադրութիւնը զայն խլեց մեզմէ: Միւս կողմէ՝ 3րանդին գրութիւնը TESEV-ի Արտաքին Քաղաքականութեան ծրագրի արխիւին մէջն է, առանց որեւէ միջամտութեան, այսինքն՝ 3րանդին յանձնած ձեւով կը մնար: Երբ Մէնսուր ըսաւ թէ այս գիրքին հրատարակութիւնը որպէս երախտապարտութեան խորհրդանիշ է, ու առաջարկեց 3րանդ Տինք 3իմնադրամի մատենաշարէն լոյս ընծայել, կը յիշեմ որ չափազանց ուրախացած էի կորսուած թանկարժէք իր

մը վերագտածի նման: Կրնայ անհավատալի թուիլ, բայց այս գիրքը բոլորովին վերացած էր յիշողութենէս: Թերեւս ալ Զրանդին կորուստը պատճառ եղած էր այդ մոռացութեան: Ներաշխարհս կը մերժէր իր բացակայութիւնը փոխարինող ամէն ինչ:

Բայց անցնող ժամանակահատուածին մէջ, այս գիրքը իմ մօտ հոգեբուժական ազդեցութիւն մը ունեցաւ: Գրեթէ ոչ մէկ փոփոխութիւն կատարեցի... Իր ծրագրած ձեւով ճիշդ այնպէս պահպանեցի յաւելուած բաժինները: Կարգ մը նախադասութեան վրիպակները ուղղեցի միայն, իսկ խօսակցական լեզուով գրուած ըլլալուն համար ալ որոշ թիւրիմացութիւնները յստակացուցի: Բայց Զրանդին ոճը, ձայնը եւ խօսքը նոյնութեամբ կը ներկայանայ ընթերցողին: Դժուար թէ չլսուի հոգիի խորքին մէջ այդ ձայնին ջերմութիւնը ինչպէս նաեւ չտեսնուի մարդկայինի մատուցուած ջանքը:

Կոչ մըն է այս գիրքը... Սրտի, սիրոյ, խղճի եւ վերջապէս բոլոր մարդկութեան կոչ: Այս աշխարհին, բոլորիս հոգիներուն դրոշմուած է, մէկ հպումով բոլորս մեղմացնող գործիչին յիշատակն է այս: Բորբոքած, յորդառատ ջուրին իր ճամբան որոնելու արկածին փաստաթուղթն է այս գործը: Բայց ո՞վ կրնայ կարծել թէ Զրանդը կը սեղմի ճեղքի մը: Այս գիրքն ալ մեր սրտերուն ճեղքերէն պիտի հոսի, պիտի լեցնէ մեր սրտերուն ակօսները: Սակայն միշտ անելի շատը պիտի ըլլայ: Ըսի չէ, որ Զրանդն է այս: Ո՞ր ճեղքը կը դիմանայ նման ջուրին:

Էթիէն Մահճուպեան

Յունիս 2008

ՁՕՆ...

Պատմության գրուած էջերը նախապէս ապրուածներու մասին են, իսկ սպիտակ էջերը՝ ապրուելիքներու մասին:

Հայ-թրքական յարաբերութիւններու տեսանկիւնէն, ահա անգամ մը եւս մեր առջեւ են դարերու խորքէն եկածները եւ դէպի ապագայ դարեր երկարող մեր միասնական ճակատագիրը:

Մեր նախնիները անցեալին լաւ կամ գէշ գրեցին իրենց վիճակուած էջերը:

Հիմնական հարցն այն է, թէ մենք այսօր ի՞նչպէս պիտի գրենք այս սպիտակ էջերը:

Անցեալին ապրուած մեծ ողբերգութեան պատասխանատուներուն նման պիտի վարուի՞նք, թէ՞ ոչ այդ թերութիւններէն դաս քաղելով՝ նոր էջերն այս անգամ քաղաքակիրթ մարդու վայել ոճով պիտի գրենք:

Մեր առջեւ ծառացած ամենամեծ պատասխանատուութիւնն է այս:

Այս պատասխանատուութեան պարտադրուածը իրագործելէ խուսափողները կամ անոնք, որոնք դեռ կը ցանկան նման ողբերգութիւններով լեցնել, իրականութեան մէջ բնաւ ետ պիտի չմնան անցեալին ապրուած տառապանքներու պատասխանատուներէն:

Իսկ մենք՝ պատասխանատուութեան գիտակցողներս, երբեք պէտք չէ թոյլ տանք, որ մեր օրերու էջերն ալ նոյն ոճով գրուին:

Այս համեստ աշխատութիւնը կը բաժնեմ սպիտակ էջերու պատասխանատուութիւնը ստանձնած բոլոր խաղաղասէր շրջանակներուն հետ: Չայն կը ձօնեմ հազարամեակներ շարունակ այս հողերուն վրայ գոյատեւած իբրեւ շինարար ժողովուրդին, սակայն այդ դառնութեամբ լեցուն տարիներուն իր բնօրրանէն արմատախիլ եղած, կեանքի եւ հայրենի երկրին վրայ ստեղծած մշակոյթին հետ իր կապերը խզուած Հայ ժողովուրդին եւ այդ ժամանակաշրջանին իրենց կեանքը կորսնցուցած հայ, թուրք եւ կամ քիւրտ ինքնութեամբ Անատոլիոյ բոլոր անմեղ գոհերու յիշատակին կը ձօնեմ:

Հրանդ Տիկը

5 Նոյեմբեր, 2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախաբան՝ «Ո՞ր ճեղքը Կը Դիմանայ Նման Ձուրին»,
Էթիէն Մահճուպեան, 7

Ձօն, 11

Յառաջաբան, 15

Յարաբերութիւններու Բացակայութիւնը Սօտ Անցեալին 21

Պաշտօնական գետնի վրայ յարաբերութեան ջանքեր 21

Ոչ-պետական գետնի վրայ շփման ջանքեր, 27

Հայ-թրքական անյարաբերութիւնը սնուցող ազդակներ

Պատմութիւն... Հարուած... Փարանոյա..., 33

Հայաշխարհի հոգեվիճակը կամ անտանելի ժառանգը՝ հարուած, 36

Սպառուած ժառանգ՝ պատմական յարաբերութիւն, 41

Թրքական ազգային ինքնութեան հիմնաքարը՝ հայկական
փարանոյա, 48

Ի՞նչ ընել... Ի՞նչ չընել... 55

Դերակատարներ... Դերեր... Նախընտրութիւններ..., 55

Կղպանքը բանալու առաջին քայլը՝ Սահմանի բացումը...

Դիւանագիտական յարաբերութեան հաստատումը..., 62

Կղպուած պատմութիւնը բանալ եւ յառաջանալ, 70

Պիտանի քաղաքականութեան տրամագիծը՝ փոխադարձ շահերու
դաշտը, 90

Վախի փոխարէն ցանկութիւն, 97

Վերջաբան, 101

Յաւելուածներ

Հայ ինքնութեան նոր արտայայտութիւններ, կամ «Երբ ջուրը իր
ճամբան գտնէ», Հրանդ Տիկնի, 112

Կոչ՝ Հայաստանէն Թուրքիոյ

«Որպէս հարեւաններ՝ պէտք է ցանկանանք անցեալը յաղթահարել»,

Վարդան Օսկանեան, 118

Խորհրդարանական յանձնաժողովի ատենագրութենէն, Հրանդ Տիկնի, 124

Այբեանական Ցանկ, 134

Թուրքիոյ արտաքին քաղաքականութիւնը վերջին տարիներու ընթացքին զօրեղ կամք կը ցուցաբերէ հարեւան երկիրներու հետ առանց խնդիրներու եւ ապահով գետնի վրայ յարաբերութիւններ հաստատելու: Այլ իմաստով՝ միայն Հայաստանի հանդէպ յառաջընթաց մը չկրցաւ գոյացնել:

Ես թուրքիացի հայ լրագրող մըն եմ, որ երկար տարիներէ ի վեր կը հետեւիմ Թուրքիոյ եւ Հայաստանի, կամ թուրքերու եւ հայերու միջեւ տարբեր ձեւաչափերով գոյացած պաշտօնական եւ անպաշտօն բոլոր ժողովներուն:

Արտասահմանեան ճամբորդութիւններու ընթացքին, սփիւռքահայութեան ամենաանգիջող խմբակներուն հետ հանդիպումներու Նկատեցի, թէ երկխօսութեան զարգացման զուգահեռ կ'աւելնայ իրարու հանդէպ հասկացողութեան տրամադրութիւնը եւ սկիզբի վերապահութիւնները իր տեղը կը թողուն դրական բնականացման:

Այս դրական հոգեվիճակը շատ աւելի բացայայտ կը դառնայ յատկապէս ոչ-պետական հասարակութեան երկխօսութեանց պահուն:

Սակայն, հայ-թրքական յարաբերութիւնները բաւական հեռու են լուծման կետէն, եթէ այսօր ալ, վաղն ալ այս ուղղութեամբ սոսկ շռայլուի բարեացակամ ելոյթներ:

Նախ եւ առաջ, բազմազան են հարցին կողմերը, դերակատարներն ու իրադարձութիւնները:

Չատ-զատ հիմնահարցեր են պատմութիւնը, Կովկասի մէջ առկայ

ձգտեալ վիճակը, արտաքին դերակատարներուն այս հարցին նկատմամբ ցուցաբերած հետաքրքրութիւնը եւ, վերջապէս, այլ խնդիր է հայերու կամ թուրքերու կողմերուն իրենց ներքին կազմին մէջ ոչ միատարր, ոչ միակարծիք ըլլալը:

Չորօրինակ հայաշխարհը... մէկ կողմէ Յայաստանը, իբր պետութիւն եւ ժողովուրդ, միւս կողմէ՝ աշխարհացրիւ սփիւռքահայութիւնը եւ, անշուշտ, հոգ չէ թէ իր փոքր դերակատարութեամբ թրքահայութեան գոյութիւնը:

Այս բազմազանութեան մէջ բնականաբար, ամէն մէկը կը հարկադրուի իր կեցած դիրքէն դիտելու: Քանի որ տարբեր դիրքերու մէջ կը մնան, անխուսափելիօրէն տարբեր են նաեւ տեսանկիւնները:

Ուրեմն ես ալ իմ կեցած տեղէն, իմ տեսակէտն է, որ կը ներկայացնեմ ձեզի: Եւ իսկոյն կ'ուզեմ զգուշացնել, թէ այս աշխատութիւնը դիտուած է Թուրքիացի Յայ Յրանդ Տիւնքի տեսանկիւնէն, եւ բացարձակապէս չի ձգտիր թրքահայութեան տեսանկիւնը ելլելու:

Ահա՛ այսպէս է իմ կեցած տեղի հիմնակետերը:

Ես երկու ինքնութիւն ունիմ եւ կը գիտակցիմ երկուքին ալ:

Առաջինը՝ Թուրքիացի եմ, Թուրքիոյ Յանրապետութեան հայրենակիցն եմ:

Երկրորդը՝ Յայ եմ:

Բացի այն, որքան ալ մէկ մասնիկն եմ Թուրքիոյ հայ հաւաքականութեան, միաժամանակ զգացական մէկ տարրն եմ Յայաստանի եւ աշխարհացրիւ Յայկական սփիւռքի, ցեղակիցն եմ այդ մարդոց հետ: Բոլոր այս պատճառներով հանդերձ՝ եթէ մէկը, նոյնիսկ միայն մէկ բանի համար պիտի փափաքի հայ-թրքական յարաբերութիւններու բարելաւումը, ես իրմէ նուազագոյն երկու անգամ աւելին պատճառ ունիմ այդ ցանկալու:

Չիս որ ինքնութեամբ կ'ուզեք՝ ընդունեցէք, ոչ մէկ տարբերութիւն...

Իմ երկու վիճակովս ալ Թուրքիա-Յայաստան, այնպէս ալ հայ-թրքական յարաբերութիւններուն բարելաւումը եւ այդ յարաբերութիւններուն բնականոնացման համար ջանք վատնելը՝ իմ դիմաց կը ցցուի որպէս առաջնահերթ եւ անզիջելի պաշտօն:

Սկսիմ առաջինէն:

Ըսի՝ «Թուրքիացի» եմ: Անշուշտ, որպես հայրենակից, իմ ամենամեծ բարձանքս է երկրիս հարեւաններուն հետ համերաշխ գոյատեւումը:

Իմ երկիրը, հանրապետութեան հիմնարկութենէն ի վեր, երբեք չկրցաւ բարիդրացիութիւն վայելել իր հարեւաններուն հետ: Երկրի մէջ ժողովրդավարական զարգացումին արգելք հանդիսացող խոր ազգայնամոլութիւնը սնանեցաւ այս թշնամական քաղաքականութենէն: Երկրի եկամուտի աղբիւրներուն կարեւոր մէկ մասն ալ կը ծախսուի «հարեւան երկրի սպառնալիքէն» պաշտպանուելու եւ «ապահովութիւն» ապահովելու պատճառաբանութեամբ:

Մինչդեռ, իր հարեւաններուն հետ համերաշխ ըլլալու պարագային, երկրիս մէջ եթէ աւելի մեծ բաժին յատկացուի զարգացման, կրթութեան եւ առողջապահութեան, անշուշտ, ժողովուրդը ինքզինք աւելի երջանիկ, աւելի ապահով եւ աւելի խաղաղ պիտի զգայ:

Ահա Թուրքիոյ տարակարծութիւններ ունեցող հարեւաններէն մէկն ալ Յայաստանն է. այժմ դիւանագիտական յարաբերութիւն նոյնիսկ չկայ իրենց միջեւ, սահմաններն ալ փակ են:

Անշուշտ, իբրեւ Թուրքիոյ Յանրապետութեան հայրենակից, իմ առաջնահերթ պատասխանատուութիւնս է այս յարաբերութեան բարելաւումը եւ պահանջել սահմանադրան բացուիլը:

Երկրորդ՝ ըսի, որ «Յայ» եմ...

Մենք՝ թրքահայերս, ուզենք թէ չուզենք, արտայայտել խուսափինք կամ ոչ, վերջապէս Յայաստան կոչուած երկրի բնակիչներուն եւ աշխարհացրիւ սփիւռքահայութեան ցեղակիցն ենք ու նոյն ծառին, մեր ժամանակներուն հասած ծիւերը:

Անշուշտ որ մեր այս զգացական կապը չի խանգարեր մեզ Թուրքիոյ հայրենակից ըլլալէ, եւ երբեք չի նշանակեր, թէ կրնանք դաւաճանել մեր հայրենակիցներուն:

Ապրած երկրի լաւ հայրենակից ըլլալը չ'արգիլեր ուրիշ հողամասի մը վրայ ապրող ազգակիցներու հետ զգացական կապ ունենալը, կամ այդ երկրի ժողովուրդին երջանկութեան համար կարելի եղած ճիգ թափելը:

Ահա այս գիտակցութեամբ կը ցանկամ որ Յայաստանի եւ հայաշխարհի ապագան ալ ապահով ու խաղաղ ըլլայ, եւ յատկապէս Յայաստան հաշտ ու համերաշխ ապրի իր հարեւաններուն հետ:

Հակառակ պարագային, շատ լաւ գիտեմ թէ՛ նոյնիսկ իր ներքին բոլոր հարցերը լուծէ, միեւնոյն է, եթէ Հայաստան չէ լուծած իր երկու հարեւաններու՝ Թուրքիոյ ու Ատրպէյճանի հետ հարցերը, երբեք ապահով պիտի չզգայ ինքզինք:

Եթէ կը շարունակուին հարեւան երկիրներու հետ հարցերը, այս կը նշանակէ, թէ երկրին եկամուտի աղբիւրները պիտի տրամադրուին պաշտպանութեան ծախսերու, փոխանակ՝ զարգացման եւ յառաջ-դիմութեան:

Օտար երկիրներու խորհրդարաններուն մէջ օրակարգի վրայ եկող ամէն «Հայկական ցեղասպանութեան ճանաչման բանաձեւ»ը մեզ՝ թրքահայերուս համար կը դառնայ ճակատագրական փորձ մը:

«Ճակատագրական» արտայայտութեան գործածման պատճառը կապուած է հետեւեալ մտահոգութեան հետ. «Յիմա մենք, որպէս թրքահայեր ի՞նչ պիտի ըսենք այս նիւթին շուրջ»:

Երբ նկատի ունենանք անցեալի եղած նման իրավիճակները՝ կը տեսնենք, որ անտեղի չէ այս մտահոգութիւնը:

Հետեւաբար, մինչեւ մօտիկ անցեալ, երբ տեղի կ'ունենային այնպիսի դէպքեր, Թուրքիոյ մէջ ապրող հայերը մամուլի մէջ ցուցող «մենք շատ հանգիստ ենք Թուրքիոյ մէջ» բացատրութենէն բացի, դժբախտաբար, չէին կրնար արտայայտել իրենց բուն զգացումները: Ներկայացուածը աւելի շատ կ'արտայայտէր մեր «ճարահատութիւնը»:

Հարցը, նախ եւ առաջ, օրակարգի կը բերէր մեր պատմական անժխտելի իրականութիւնը, եւ մենք ալ Թուրքիա ապրելով հանդերձ, հայաշխարհի մէկ մասնիկն էինք: Միւս կողմէ, որքան ալ հայաշխարհի մէկ մասնիկը ըլլանք, Թուրքիա կ'ապրէինք ու թուրքիացի էինք:

Եւ Թուրքիան աւելի լաւ կը ճանչնայինք, քան արտերկիրներու մէջ ապրողները:

Հետեւաբար, երկու իրականութենէն բխած նմանող մեր պատգամները մեզ դիւրաւ կրնային բերել «ցեղին դաւաճանելու» կամ «երկրին դաւաճանելու» կետին:

Իսկապէս, դժուար էր մեր գործը:

Յայտնի է, որ նման փորձեր յետ այսու յաճախ պիտի ապրինք:

Հետեւաբար մեր պատգամները պէտք է յստակ ըլլան, յստակ ու ամուր:

Այնպիսի ժամանակահատուածին մէջ կ'ապրինք, որ, ամէն ժամանակէ աւելի լաւ բացատրելու ենք մեր խորհուրդը:

Մեր պատգամներուն մանրամասնութիւններն իսկ կարեւոր են այս առումով: Այլապէս անկարելի է կանխել պատգամներուն խեղաթիւրումը եւ կամ իմաստէն դուրս մեկնաբանումը:

Մեզ՝ նման վտանգի մը մատնելու համար, «պատրաստ» սպասողներուն թիւն ալ բնաւ քիչ չէ, թէ՛ Թուրքիոյ մէջ եւ թէ անոր սահմաններէն դուրս:

Կը ցանկամ, որ այս համեստ աշխատութեան բոլոր այս մանրամասնութիւնները ուշադրութե ան արժանանան ու արժեւորուին: